

ՄԻՔԱՅԵԼ ՄԻԱՆՍԱՐՑԱՆՑԸ՝ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ

Ս. Ա. ՎԱՐԴԱՆՅԱՆ

Հայ մշակույթի պատմության մեջ իրենց ուրույն տեղն ունեն մեր անցյալի հրատարակիչները։ Նրանք այն երախտավորներից են, որոնք իրենց կյանքը նվիրել են մի նպատակի։ Հայերեն լեզվով տպագիր գիրք հասցնել աշխարհի տարբեր հատվածներում ապաստանած հայ ժողովրդի ամենալայն շրջաններին։ Գործի կարևորությունը պայմանավորված էր պատմաքաղաքական հանգամանքների հետևանքով ազգի ընդհատված ներքին կյանքը շաղկապելու, ժողովրդի ամենալայն շրջաններին լուսավորելու, քաղաքակրթելու, ազգային ավանդներով դաստիարակելու ակնկալիքով։ Հայ հրատարակիչները գրքերի տպագրության գործն անցյալում իրականացրել են մեծ մասամբ հայրենիքից դուրս, օտար ափերում։ Գիրքը հրատարակության պատրաստելուն զուգահեռ, նրանց միշտ մտահոգել է նաև տպարաններ հիմնելու, ևարձակություններ, տառեր ձեռք բերելու ծանր գործը։

Հայ հրատարակիչների շարքում իր ինքնատիպ գործունեությամբ աչքի է ընկնում XIX դ. մշակութային-հասարակական գործիչ, հրապարակախոս Միքայել Միանսարյանցը։ Ունենալով որոշակի հրատարակչական գիտելիքներ՝ Միանսարյանցը 1860-ական թվականներից մինչև 1870-ի կեսերը ձեռնամուխ է լինում հրատարակչական բարդ ու պատասխանատու գործունեության։ Այն կապված է նրա լուսավորական ծրագրերի, ազգային բազմաբնույթ խնդիրների իրագործման հետ։ Սկզբնական շրջանում նա ձեռնամուխ է լինում Եվրոպայի առաջադեմ երկրներում ազգային խնդիրների շուրջ տպագրված գրքերի թարգմանությանն ու հրատարակությանը։ Այս հարցում Միանսարյանցն առաջնորդվում էր կոնկրետ ծրագրերով՝ փորձելով եվրոպական կյանքի ու կենցաղի, ազգային-կրթական գործունեության մասին հրատարակված գրքերի թարգմանությամբ նպաստել հայ ազգային մշակույթի զարգացմանը, օգնել մեր հասարակության ամենալայն խավերին ճանաչելու խորհելու, մտորելու, հաղորդակցվելու ազգային արժեքներին։ Թարգմանական աշխատանքներն իրագործելու նպատակով նա համագործակցում է ծառայում էր նախկին Միքայել Միքայել Նալբանդյանի հայրենակից ու բարեկամ, բժիշկ Միքայել Տեր-Գրիգորյանցի հետ, որը հայտնի էր նաև իր վոդկիլներով։ Միանսարյանցի պատվերով նա ռուսերենից թարգմանում է ֆրանսիացի գիտնական էդուարդ Լաբուլեի «Ազգային կրթություն» գիրքը։ Այն Միանսարյանցի խմբագրությամբ, հավելվածներով և ծանոթագրություններով լույս է տեսել 1862 թ.՝ Ս. Պետերբուրգում։ Գիրքը նվիրել է «Նորին վեհափառութեան Տեառն Գեորգայ, ծայրագոյն պատրիարքին Մայր աթոռոյ Սրբոյ էջմիածնի Ս. Կաթողիկոսին Ամենայն հայոց»։ Գիրքը կաթողիկոսին նվիրելու դրդապատճառների մասին Միանսարյանցը գրում է. «Ամենայն հայոց վեհափառ հայր։ Այս գրքի մեջ հատկապես և գլխավորապես խոսվում է ազգային կրթության, ինքնակրթության և ժողովրդական դրատունների վերայ։ Որովհետև վեհափառութեանդ կոչումը, առաջին ու վերջին պարտականությունն է այդ հարցերին դարձան տալ, ըստ շափու կարողության համեմատ տնօրինություն անել նույն իսկ ազգի հետ միասին,—մեզ քաղցր թվեցավ այս տպագրության ճակատը Ձեր վեհափառության անվամբ պսակել։ Վեհափառությանդ խոնարհ որդի Միքայել Միանսարյանց»¹։ Նպատակը պարզ է. կաթողիկոսին

¹ Էդուարդ Լաբուլե, Ազգային կրթություն, Ս. Պետերբուրգ, 1862, էջ Բ։

նկերչնչկ կրթական, լուսավորական խնդիրների նկատմամբ հանդես բերելու առավել դործուն վերաբերմունք, քանի որ պետականություն չունեցող ժողովրդի համար կաթողիկոսին էր վերապահված ազգային բազմաբնույթ խնդիրներին ընթացք տալու մենաշնորհը:

Միանսարյանցը գիտակցում է, որ հայ ժողովրդին անհրաժեշտ է քաղաքակրթ ապրելակերպի իմացություն, կյանքի բոլոր բնագավառներում, նա յապում է, տեսնելով, որ երեսնանրը սահման են դատապարտված բժըշկական տարրական իսացությունից զուրկ ծնողների պատճառով: Նրա սցբազմակողմանի հիմնավոր գիտելիքներ հաղորդելու նպատակով ձևանալու է յիևում ժամանակին հայտնի՝ Անգլիայի թագուհու բժիշկ, էդինբուրգի բժըշկական համալսարանի անդամ Կոմբի գրքի հրատարակման աշխատանքը: Կիրքը լույս է տեսել 1868 թ. Ս. Պետերբուրգում: Առաջաբանում հրատարակիչը իր ձևնարկած գործի դրապատճառների մասին նշում է. «Սեւ կանխում ենք մեր կարողության շահով նպաստամատույց լինել հայ ժողովրդի մեջ տարածելու ուսումնական առողջ գաղափարներ, վերաբերվյալ երեսնանրի ֆիզիկական և բարոյական դաստիարակության, դեռաւաւ մեծ նողների թիվը պակասեցնելու և ահասարակ ազատ պահելու այս մեծ մասամբ անուղղելի սխալներից, որ սակավակրթ ազգերի մեջ կապակց ծննդյան և զաւոց սերունդի դաստիարակության հետ»²: Գրքի բովանդակությունն են կազմում մանկան սննդի, խնամքի, կրոնական, մտավոր, ֆիզկական դաստիարակության խնդիրները:

Աստուծոյաւաւ ու կրթական նպատակներից ելնելով՝ նա ձեռնամուկ է լինում ազգային արժեքների, հատկապես երգերի հրատարակման գործին: Հայ ազգային երգերի հրատարակման խնդիրը պայմանավորված էր նաև ԱՄՆ դ. երկրորդ կեսի հայոց մշակութային կյանքում ծագած նոր պահանջների թելադրանքով: Հիմնահարցներից մեկն էր հայ քնարերգության վերածննան, վերահաստատման խնդիրը: Հայ քնարերգության վերածնունդը կվերածնի նաև հայ ժողովրդի հիշողությունը իր կորցրած պետականության մասին, դարավոր նիրհից կարթնացնի նրա ազգային ինքնագիտակցությունը, և նա կապրի ազգային լիարժեք զարթոնք: «Իժվար չէ հասկանալ, թե ինչ մեծ և խորհրդավոր ներգործություն ունին ազգային լեզվով ասած երգերը ազգայնության և հայրենասիրության ոգին արթնացնելու և դարդացնելու», — գրում է Միանսարյանցը: Հրատարակիչն ուսումնասիրում է հայ հին ձեռագիր սատյանները, տաղարաններն ու երգարանները: Ձեռքի սակ ունենալով բազմաքանակ նյութեր՝ 1863 թ. Ս. Պետերբուրգում հրատարակում է «Խսար հայկական» խորագրով հանրահայտ ժողովածուն: «Քնար հայկականում» տեղ են գտել 433 միավոր քնարական ժանրի գրական, աշուղական ու ժողովրդական ստեղծագործություններ: Միանսարյանցն իր լուսավորական հայացքները, գաղափարներն ամփոփեց «Մրագիր կանոնավոր և վայելուչ գրության պատմությունն ու տեսություն» ծրագրային գրքում: Կիրքը տպագրվել է 1872 թ., Ս. Պետերբուրգում: Այն նվիրել է կնոջը՝ Շուշան Աղարոնյանին և զավակներին՝ Նղիսաբեթին ու Արամին: Կրքում արծարծվում են բազմազան խնդիրներ: Հեղինակը ուսուցիչներին ծանոթացնում է ոչ միայն «կանոնավոր և վայելուչ գրության» ուսուցման ձևերին, այլև նրանցից պահանջում է միանգամայն կանոնավոր ու վայելուչ պահվածք կյանքի բոլոր բնագավառներում: Հայերենի գրության ձևերին, գեղարվեստական տառաձևերին ծանոթանալու համար Միանսարյանցն ուսումնասիրում է զանազան ձեռագիր մատյաններ ու կոնդակներ: Նա կարծում է, որ աշակերտներին ոչ միայն պետք է վարժեցնել կանոնավոր, վայելուչ ավանդական գրության ձևերին, այլև նրանց մեջ սերմանել մեր նախնիների վերաբերմունքն ու պաշտամունքը գրի հան-

² Կ ո մ բ, Խնամատարություն երեսայոց մարմնական և բարոյական, Ս. Պետերբուրգ, 1868, էջ Բ:

³ Մեղու Հայաստանի, 1862, № 48:

դեպի «Մեր նախնիները» գրում է Միանսարյանցը, — մեծ քանք են դրել, մինչև անգամ թագավորները և մեծամեծ էրեւելի իշխանները պարապել են այսպիսի աշխատանք, օրինակելով Սուրբ Ավետարանը և այլ աստվածաբանական և բնականական ձեռագրերը և մեծ վարձ են տվել ինչպես ձեռագիր ունեցող բարձրներին և թե ձեռագիր մատյաններ գրելու⁴։

Գրքում բերված վկայություններից պարզվում է, որ Միանսարյանցը մեկնել է Վենետիկ, աշխատել Մխիթարյան մատենադարանում, ծանոթացել մեսրոպատառ գրերի ձևին, գործածության եղանակներին։ Մի վկայություն խոսում է այն մասին, որ նա գործնական կապերի մեջ է եղել Վիեննայի մխիթարյան Արսեն Այտընյանի հետ, որը գծագրական-նկարչական օրինակներ էր տալիս օտար փորագրիչ վարպետների, քանի որ լավ նկարիչ էր և պատվավոր գրության տեր⁵։ Այտընյանը հայերեն տառերի բազմազանության, գծագրական աշխատանքների մասին խորհուրդներով օգնել է նաև Մ. Միանսարյանցին։ Չսահմանափակվելով հայերենի գրության ձևերի մասին ստացած տեղական իր հարուստ գիտելիքներով՝ Միանսարյանցը որոշում է ինքը ևս իր նպատակները ապահովել մեծ գործին։ Նույն Վիեննայում մի վարպետի մոտ պղնձի վրա փորագրել է տալիս քանոն (եզյու օրինակ), որի վրա բոլոր խազերը և շափերը միլիմետրերով էին փորված։ Ելք քանոնը և նրա հիման վրա ձեռքով ընդօրինակած տողացանցը Ս. Պետերբուրգում 1870 թ. ցուցադրվում է «Արհեստահանագետում» և «Բարձրագույն հաստատած հանձնաժողովը» հուլիսի 1-ի որոշմամբ նրան ուղարկում է նախարարի ստորագրությամբ պատվավոր վկայական՝ «Մեր ինքնուրույն և սխիստմատիկական աշխատանք համար»⁶։

«Մրագրում» առանձնակի տեղ է տրված հայ սուրբագրության պատմությանը, ժամանակագրորեն թվարկված են հայ տպարանները և նշված նրանց կոնկրետ տեղավայրերը։ Այստեղ հետաքրքիր տվյալներ կան հայտնի մանկավարժ Պետալոցցիի, հոմեոպաթի հռչակավոր հոգևոր, բերական կվինտիլիանոսի, գերմանացի մանկավարժ Լոկկեի գործունեության մասին։

Արտասահմանյան մի շարք ուղևորությունների ժամանակ (Վիեննա, Վենետիկ, Քյոլն, Հռոմ, Կ. Պոլիս) Միանսարյանցն աշխատել է տեղի գրադարաններում, ծանոթացել հին և ժամանակակից հրատարակություններին, ցուցակադրել լույս տեսած գրքերը։ Իր նպատակների մասին նա տեղյակ է պահել հայ մտավորականության ամենալայն շրջաններին։ Նրան այդ գործում օգնել են Ղևոնդ Ալիշանը, Սմբատ Շահազիզը և ուրիշները։ 1874 թ. Ս. Պետերբուրգում տպագրվում է նրա «Կովկասի և Անդրկովկասի մատենագիտություն» աշխատության առաջին հատորը։ Միանսարյանցն իր չրքերի տպագրությունն ընդհանրապես իրականացրել է Ս. Պետերբուրգում, մի քաղաքում, որն առանձնապես աչքի չէր ընկնում հայ գրքի սուրբագրության համար ստեղծված նպատակավոր պայմաններով։

Նկատի ունենալով Միանսարյանցի նվիրվածությունն ու ծառայությունները հրատարակչական գործին, թվում է, թե նա պետք է մտահոգվեր սեփական տպարան ունենալու գաղափարով։ Քանի որ այդ թվականներին տպարանական պարագաներն ազատ վաճառվում էին արհեստանոցներում, դրանք կարելի էր գնել և ամենակարճ ժամկետում սարքավորել։ Սակայն Միանսարյանցի մի վկայությունը խոսում է Ս. Պետերբուրգում հայերի տպարանական, գրաշարական և սրբագրական գործում հմտության պակասի մասին. «Թողումք անախորժ արգելառիթները, որ միշտ անպակաս են այստեղ և միշտ կից հայ տպագրության գրաշարների և սրբագրողների պակասությանը և նրանց անկարողությանը պատճառով»⁷, դրում է Միանսարյանցը։ Գրքերի

⁴ Մ. Միանսարյանց. Մրագիր կանոնավոր և վալելու գրության պատմություն ու սեսություն, Ս. Պետերբուրգ, 1872, էջ 13։

⁵ Նույն տեղում, էջ 108։

⁶ Միքայել Միանսարյանց, Քնար հայկական, Ս. Պետերբուրգ, 1878, էջ ԺԹ։

տպագրությունն իրականացնելու նպատակով Միանսարյանցն ընտրում է ինքնատիպ ուղի։ Նա ձևաբ. է բերում հայերեն տառեր և դիմում Ս. Պետերբուրգում հայտնի տպարանատերերի՝ Բակստի, Նուսվալտի, Գոլովինի, Տրանշևիի և այլոց։ Դրանցից ծառայություններին Այսպես, Կոմբի և Լաբուշի գրքերը տպագրելու համար Միանսարյանցն իր անձնական ծախսերով կեմանի ձուլարանից դնել է «յոթը պլատին մոտ հարյուր տառեր», իսկ «գլխատառերն ու ձաղկատառերը»՝ Հովհաննես Ստեփանյան Անանյանցից։ Նույն գրքի տպագրության համար նա երբեմն դիմել է երկու տարբեր տպարանների ծառայությունների։ Կոմբի գրքի տարրեր հատվածներ տպագրվել են միաժամանակ և Տրանշևիի, և Բակստի տպարաններում։ Բակստի և Նուսվալտի տպարաններում են տպագրվել «Քնար հայկականի» տարրեր հատվածները։

Հիշյալ տպարաններում լույս տեսած գրքերի տեխնիկական որակը չի բավարարում հրատարակիչ Միանսարյանցին։ Իր գրքերի որակը կատարելագործելու նպատակով նա մեկնում է Վիեննա, ծանոթանում Մխիթարյան տպարանի տնօրեններին։ Պատահական չէր այս տպարանի ընտրությունը։ Այն նշանավոր ու հարուստ էր տպագրական բաղադրան տառերով, գլխատառերով ու վարդապետներով։ Նա տեղում ձեռք է բերում Մխիթարյանների մայր տառերից ձուլած տառեր և իր «Քնար հայկականը» տպագրում հենց այդ տառատեսակներով։

Միանսարյանցին իր վերապահված նաև իր հրատարակած գրքերի խմբագրի պարտականությունները։ Գիրքը ընթերցողին անթերի հասցնելու համար նրա թափած ջանքերը երբեմն չէին արդարացվում օտար գրաշարների ու տպարանատերերի աշխատանքի անփութության պատճառով։ Նա խոր ավստոսանք է ապրում, որ «Քնար հայկական»-ում տեղ են գտել բազմապիսի վրիպումներ։ Միևնույն ժամանակ ամենայն ջանք գործ դրինք և ոչինչ զոհաբերություն, ոչ հրամայան, ոչ անձնական շխնայեցիք, — դրում է Միանսարյանցը, — որ բոլոր տպագրությունը լինի առանց սխալների, բայց տեղական հանգամանքները մեղադրելու համար ես Առաջի աշաց ունենալով, որ այս գիրքը լինելու է զանազան հասակի և պարզազման աստիճանի անձանց ձեռք, մենք ավելացրինք անսխալ վրիպակների ցուցակը։ Խորհուրդ ենք տալիս ամենեցուն, ով որ այս գիրքը գործ կածե, առաջ և միանգամից ուղղել բնագրի այս մեր ցույց տված բոլոր վրիպակները և հետո ձեռնամուխ լինել գրքի գործածելուն»։ Իր ձեռնարկած գործի նկատմամբ ունեցած լրջմիտ վերաբերմունքի ու պատասխանատվության մասին են խոսում բերված փաստերը։ Հրատարակիչ-խմբագրի պարտականությունն է հրատարակված գրքերի միջոցով ուսուցանել նաև բառի ուղղագրությունն ու նրա ճիշտ ըմբռնումը։

Գրքի վաճառքը կազմակերպելու գործը ևս հրատարակչի ուսերին էր ընկած։ Հաղորդակցման ճանապարհների հետ կապված դժվարությունները, շրջիկ գրավաճառների սակավությունը (նրանք չէին դիմանում հրավաճառանոցների մրցակցությանը և ասպարեզից հեռանում էին), փոստային առաքումների համար լրացուցիչ գումարներ հատկացնելը անասելի լարված պայմաններ էին ստեղծում հրատարակչի համար։ Գրքի սպառման ու վաճառքի գործը դառնում է հրատարակչի գլխավոր մտահոգությունը։ Միանսարյանցն իր պրոբլեմները վաճառքը կազմակերպել է Ս. Պետերբուրգում, Թիֆլիսում, Պոլսում, Ջնուսիսում, անգամ սեփական տանը։ Նա գտնում էր, ով այդ գործին աջակցելու համար պետք է ընդգրկվեն ամենատարբեր հիմնադրամներ ու անձինք։ Եվ դիմում է քահանաներին, մայր եկեղեցու երեցփոխներին, դպրոցների վարժապետներին, հորդորելով անմիջական կապ հաստատել տպագրողների հետ՝ գրքերի վաճառքը կազմակերպելու համար։

Անշուշտ, հրատարակչին մտահոգել է նաև նյութական տարբեր իրավիճակներում ու հանգամանքներում գտնվող ընթերցողների գնադրականության հնարավորությունը, բանի որ գրքերը վաճառվել են անհամեմատ մատչելի

գներով և այդ այն դեպքում, երբ վաճառեից ստացված դումարը հազիվ էր փակում գրքի հրատարակության ծախսերի մի մասը: Ենթե ճիշտ համեմատենք մեր այս տպագրության թղթի ազնվությունը և տողերի ու տառերի որքանությունը,—գրում է Միանսարյանը,—միշտ սողա վերա է միմիայն հիմնված բուրդ տպագրության և տպարանի հետ ունեցած հաշիվները, մյուս ուր տեղ որևիցե մասնավոր անձանց առաջին տպագրության հետ, ոչ թե միմիայն հայերենի, այլև ռուսերենի, գերմաներենի և զաղղիերենի և այլն, այն ժամանակ կապագուցվի մեր այս տպագրության ականավոր գյուրագնացությունը, արժանությունը, թեթևագնությունը այլ տպագրությանը, որովհետև Գերմանիա տպագրության ծախսը, համեմատաբար 30 մինչ 35 % դուրազին է, քանց թե Պետերբուրգը⁸:

Կոմբի գրքի առաջաբանում նա յուրատեսակ հաշվետվություն է ներկայացնում իր գրքերի հրատարակության վրա կատարած ծախսերի մասին. «Տառերը մեզ նստավ 244 ռ., Լաբուլիի թարգմանության տպագրությունը 1200 օրինակ նստավ 195 ռ., 600 օրինակ տված է թարգմանչին, 300 օրինակ ուղարկված է զանազան հայկական դպրոցներ և զանազան անձանց, Կ. Պոլիս, Մոսկովա-Վալաքիա, Վիեննա, Վենետիկ, Փարիզ և այլ քաղաքներ: Ծախում մնաց 300 օրինակ⁹, Միանսարյանցի մի այլ վկայությունը խոսում է այն մասին, որ ինքնապատակ չեն բերված այսպիսի յուրատեսակ հաշվետվությունները. «Այս տեղեկությունը հաղորդեցինք այն նպատակով, որ այս գրքերը հրատարակելու շարժառիթը չի եղել մեր անձնական շահը, այլ մեր փափաղը ըստ չափու կարողության ձեռնտու լինել մեր ազգի առաջադիմության, լուսավորության ասպարեղում¹⁰:

Գրքի նկատմամբ հասարակական վերաբերմունք ստեղծելու, հասարակության տարբեր խավերին ընթերցանության ոլորտ ընդգրկելու բազմապիսի ուղիներ էր փնտրում Միանսարյանը: Ըստ նրա, այդ գործում մեծ անելիքներ ունեն լրատվական միջոցները: Մամուլի էջերում պետք է բացատրվի այն ամենը, ինչ կապված է կոնկրետ հրատարակության լույս ընծայման հետ: Մամուլը պետք է աջակցի գրքերի տարածմանն ու սպասմանը: Միանսարյանցն այս առիթով գրում է. «Ռուսաստան և օսմանյան պետության մեջ եղած ամենատարածյալ հայ լրագիրները ժամանակ տու ժամանակ, օրինակի համար, տարին երեք կամ չորս անգամ հաշիվ տալին ամեն մի նոր տպագրությանը մասին, իսկ մասնավոր առարկաների բանիմաց վարժապետները անաչառ քննողական հատվածներ տպեին բոլոր եղած սկզբունքների վերա, ցույց տալով նոցա պարունակությունը, արժանավորությունը, թերությունը, գրքի ճակատագիրը, դիրքը, էջերի որքանությունը, տպագրության տեղը, ժամանակը, գինը, անպատճառ ուրելի, կոպեկ, մեծիտ, և դուրուշ, ֆրանկ և սանտիմ, որ հասկանալի լինի թե Ռուսաստանի, թե օսմանյան կառավարության և թե առհասարակ եվրոպաբնակ հայոց: Այսպիսի միջոցներով ազգը կարող է գիտենալ, թե ինչ և որպիսի նյութ կա հայ լեզվով ժողովրդյան թե դաստիարակելու և թե կարգալու համար¹¹:

Միանսարյանցը ժողովրդի հոգևոր և բարոյական ուժի ակունքը համարել է գիրքը: Սրանով է հենց պայմանավորված նրա ինքնամոռաց նվիրումը հրատարակչական գործին: Այդ դժվարին ճանապարհին նա հանդես է բերել նյութական ու բարոյական դժվարությունները հաղթահարելու ուժեղ կամք ու հաստատակամություն:

Միանսարյանց հրատարակչի թողած ժառանգությունն ունի ուրույն մշակութային արժեք հայ գրքի անցած պատմական ուղու վերաբերյալ և քննության հատուկ նյութ կարող է ծառայել ժամանակագրական-պատմական տե-

⁸ Նույն տեղում, էջ ԺԲ:

⁹ Կ ո մ բ, նշվ. աղիս., էջ Գ:

¹⁰ Նույն տեղում:

¹¹ Մ. Մ ի ա ն ս ա ռ յ ա ն ջ, Ծրագիր կանոնավոր..., էջ 7:

սանկյունով։ Այն փաստորեն ներկայացնում է XIX դարի երկրորդ կեսին Ս. Պետերբուրգում հայ տպագիր գրքի լույս ընծայման հետ կապված ուշադրավ դրվագներ։

Հրատարակչության ասպարեզում Միքայել Միանսարյանցի թողած լավագույն ավանդներն իրենց արդիականությունը չեն կորցրել նաև մեր օրերում և նկատելի տեղ ունեն հայ տպագրության պատմության մեջ։

МИКАЕЛ МИАНСАРЯНЦ — ИЗДАТЕЛЬ

С. А. ВАРТАНЯН

Резюме

В ряду армянских издателей XIX в. своей многогранной деятельностью выделяется общественный, культурный деятель и публицист Микаел Миансарянц. В 1860—1870-х гг. им было издано множество работ по национальной проблематике. Издательская деятельность Миансарянца была связана с его просветительскими идеями, с осуществлением многоплановых национальных программ.

Микаел Миансарянц оставил богатейшее наследие в сфере издательства, не потерявшее своей актуальности и в наши дни и занимающее достойное место в истории армянского книгоиздательства.